


—**Նիւնը** երկրորդ տեղը տուի: Տարակոյս չունէի, որ նորան յաջորդող **Կոբէ** միջնորդութեամբ աւելի ժամանակ կրստանամ ուսմունքս և գործերս յառաջ տանելու: Այնպէս **Նիւնը**, որ իմ մէջ արդէն սովորութիւն զարկած էր, վստահութիւն կուտար ինձ միւս առաքինութեանց թիկն ածելու, իսկ **Կոբէ** աւելի և աւելի **Նիւնը**, որք մինչև այժմ ունեցած պարտքերս քիչացնելով, բարօրութիւն և անկասութիւն կը շնորհեն ինձ, անկեղծութեան, արդարութեան, երկայնամտութեան, մաքրասիրութեան, հանդարտութեան, կուսութեան և խոնարհութեան մէջ ևս կը թուելու կօգնէին:

Ասկայն երկու տեսակ կանոններ կան. կան այնպիսիք, որք անպտուղ և այնպիսիք, որք պտղաւոր բողբոջի կընմանին. Յրանկէնի կանոնները վերջին տեսակէն էին: "Նսկեցէք և աղօթս արարէք" պատուէրն ի մտի ունելով, ամենայն երեկոյ նա հաշիւ կը պահանջէր ինք իրմէն ամբողջ օրուայ ժամերու համար և խստիւ դատաստան կընէր ինք իր վրայ: Այնուհետև վերոյիշեալ կանոններու գրքոյկը առջևը կը դնէր և կընշանակէր, թէ ինչ բան անոնց յարմար և ինչ բան ընդդէմ գործած է: Այնչափ ի խորուց սրտէ ջերմ աղօթք կամբառնար դէպի Արարիչն ամենայնի և զօրութիւն կը մաղթէր նորամէն: Այս գրքոյկի մէջ շատ աղօթքներ կային, մասամբ նորա սրտէն դուրս բղխած, մասամբ ս. գրքէն և մասամբ իրեն սրտակից աշխարհական բանաստեղծներէն առնուած: Խոմսոն անգլիական բանաստեղծի հետեւեալ տունը ստէպ յառաջ կուգայ զըրբոյկիս մէջ.

Ազգիւր կենաց և լուսոյ, Արարիչ իմ
Աստուած:
Տո՛ւր ինձ զբարին ծանաչել և զայն
միշտ կատարել
Պահպանեա զիս յիմարութենէ և ի
մեղաց
Եւ յամենայն սնոտի, յամենայն գարշ
խորհրդոց.
Եւ զիս զիտութեամբ, հոգւոյ հանգստութեամբ
Եւ անթառամ առաքինութիւն շնորհեա ինձ:

Քաղցր է տեսնել մանաւանդ, որ Յրանկէն արտաքին կողմանէ բարեբաստիկ վիճակի մէջ էր այս եռանդագին վերաթեման ժամանակ: Այժմ նա Վենիս մահաբեր վաճառակա՛րի գործակալն էր և իր ապագայի համար ամենայն ինչ բարիք կը սպասէր նորա ազնուութենէն:— Ինչքան երիտասարդներ կան, որ սնոտի հրապոյրներու ետեւէ ընկած, իրենց մարմինն ու հոգուն փնաս կը բերեն: Ողորմութեամբ Աստուծոյ Յրանկէն ուղիղ ծամբու վրայ մնաց և կըցաւ պահպանել զինքը այն դժուար փորձանքներու մէջ, որք դեռ հասնելու էին նորան:

(Եւրոպայէն):



Ն Ո Ւ Է Ր

Անկեղծ սրտից իմ ազնիւ բարեկամ Պետրոսի
Հայկազնոյ

ՏԱԹԵՆ

Մի ժամանակ բաղդը ինձ վիճակեց մընալու Տաթև դիւղումը, ուստի բաւականաչափ տեղեակ լինելով նրանց ներքին և

արտաքին սովորութեանցը՝ ստիպուեցայ մի քանի բարեկամների, մանաւանդ վերոյիշեալ ազնիւ ընկերիս տուածարկութիւնից ծանօթացնելու իմ սիրելի ընթերցողներիս նրանց սովորութիւնքը. ես երբէք ղիտաւորութիւն չ'ունիմ սրանով կենսագրի անուն ժառանգելու, քաւ լիցի, դա ինձանից շատ հեռի է, բայց այս ևս պէտքէ ասել, որ՝ «Ամէն մի փոքրիկ քար էլ կարող է շինուածքին ձեռնտու լինել», «Այնպէս և մեր այս փոքրիկ գործը, որ յետագայ ընդարձակօրէն և մանրամասնաբար գրողներին կարելի է մի ձեռնտու տեղեկութիւն լինի, և յուսով եմ, որ փոքր ի շատէ արժանաւորութիւն գանելու է այս աշխատութիւնը ընթերցասէրների մօտ. ուրեմն ես սկսեմ իմ պատմութիւնը պակասութիւններին ներդրութիւն ինդրելով:—

Տաթև գիւղը գտանվում է Սիւնեաց գաւառում Վաղէշ սարի հանդէպ մի փոքրիկ բլրակի ստորոտը տափարակ դաշտի վերայ, մի մղոնաչափ հեռի երբեմն հոգաւոր Տաթևու վանքից. (որի մասին ասելիքս մի ուրիշ միջոցում): Վիւղացիք բոլորը Հայեր են, մօտ . . . տուն:

Տները շինուած են կարգաւ և մաքուր, բոլորի դռները հայտնեն դէպի ի հարաւ, դռներու առաջն շինուած են լարդախէր ամառ ժամանակուայ նստելու և քնելու համար. տները բաղկանում են երեք մասնից՝ —տուն, աշխանայ (խոհանոց) և մառան. մի քանի հարուստներ ունին փոքրիկ սենեակներ, որ գործ են ածում աւելի հիւրերի համար. օդը մաքուր է, և ջուրը առողջարար, գիւղի մէջ կան երկու սառնորակ և անուշահամ աղբիւրներ, մինը

գիւղի վերեւում, իսկ միւսը ներքեւում գիւղի առջև կայ մի փոքրիկ ձորակ, որոյ մէջ բնակիչները ցանում են կանաչեղէններ 1—սոխ, հաճիճ, կոպէճ, բաղաւի, կոկիչնճ, լարդապէտի սաւաղ, լարդաւն, բողկէն, որոյ մէջ կան նաև մրգաբեր ծառեր 1 — տանձի, խնձորի, գիլասի, շլորի, ևն. որոց ոռոգումէ ձորակից անցանօղ փոքրիկ առուակը. գիւղի կալերը և գոմերը շինուած են գիւղից դուրս, որ դարմանի թոզը չապականէ աները և գոմի հոտը չ'ըփնասէ իրանց, իսկ մեր խելացի Շիրակ վանցւոց գոմերը շինուած են աներին կից, որի ապականած հոտը մեծ փնաս է պատճառում նրանց առողջութեանը, և այդ պատճառաւ է, որ Շիրակ վանքից թոյլ և վատ առողջ են քան Տաթևացիք:

Տաթևացւոց ամէն մի վէճը ճշմարտութեամբ և խաղաղութեամբ է վերջանում շնորհիւ Մելիք — Մանուշարի Օրբէլեանց, 1) որի Օրբէլեանց ցեղից լինելը հաստատում է իր ունեցած դոկոմենտները, հասարակութեան վերայ մեծ ազդեցութիւն ունի իր խոհականութեամբը և առատաձեռնութեամբը: Այս գիւղը ինչպէս հին ժամանակը՝ այժմ էլ պատկանում է Տաթևու վանքին, որի հողահարկը ստանում է նա, բնակիչները շատ հիւրասէր են, իրանց ամէնընտիր բաները՝ թէ ուտելիք, և թէ հանդերձեղէն պահում են հիւրերի համար: Առոյգ են կարմրերեւս, բարեպաշտ հայրենասէր և ճշմ

(1) Որի տոհմից մի քանիսների համար ականջովս լսած մի քանի աւանդած պատմութիւններ մի յարմար միջոցում տեղեկացնելու եմ իմ սիրելի ընթերցողներին:

մարտախօս են, միով բանիւ հայրենեաց փառացը նախանձախնդիր, փոքր ի շատէ Հայոց հին սովորութեանց փոշին երևում է դրանց մէջ. տօնում են իրանց տարեմուտը՝ Նաւասարդին, գնում են նոր մեռել ունեցողների տները հետները տանելով ամաններով կերակուրներով՝ Հագուստները պարզ է և յստակ, ձմեռ ժամանակ հագնում են իրանց ոչխարների բրդից շենած շալը, որ գործելուց յետոյ լմերով հաստանում է, և դառնում է դրափի նման, իսկ ամառ ժամանակ կապուտ կտաւից կամ զատակից արխալուխ, (կտաւը հրենք են գործում) և ծածկում են ոչխարի սորթուց գտակներ, (որը իրենք են կարում) չէթէ մեր խեղճ Շիրակ վանցւոց պէս ամենայն ինչ քաղաքից առնում, Շիրակ վանցիք բոլոր ձեռագործութիւնքը արհամարհած՝ միայն յոյսերը դրած են երկրի բերքի վերայ, և այդ մասին է, որ շատ վատ կեցութեամբ են ապրում։ Չմեռ ժամանակ դնում են քուրսի 1), և մի քանի անգամ կեանք են անցուցանում իրանց ընտանեաց հետ, չունին ամենուին գոմի օթախ (տենեակ) նստելու Շիրակ վանցւոց պէս, և չունին սովորութիւն շինծու հէքեթների բով (առասպելներով) իրար խափելու, որին մեր Շիլա վանցիք համարեա գերի են դարձած. պահում են ընտիր ձիեր հեծնելու համար, ոչխարներ, կովեր, մատակներ, եղներ, գոմեշներ և չն։ Ամառ ժամանակ զբնում են եայլայ (ամառանոց) Վաղբէլ սա-

րը, որը շատ լաւ արօտատեղի է, և ունի առատ և անուշահամ աղբիւրներ, եայլայ գնալու սովորութիւնը տանտիկնոջ և մի նորահարսի պաշտօնն է։ Վիւղի չորս բոլորը պատած է անտառով, որոց մէջ գտանվում են պտղատու ծառներ 1 — տանձի, խնձորի, շլորի, մաղաշարի, պոպոքի, զբկեռի, մասուրի և չն, ամէն տեսակ վայրի կենդանիներ, եղներ, մատաշներ, սարի այծեր, արջեր, դալէ, աղուէսներ, նապաստակներ և զանազան տեսակ զեղեցիկ թռչուններ մարահաւ, կաքաւ, դռն, աղունիկ, մշահաւ, տատրակ և չն։

Վիւղացւոց մեծ մասը պարապում են ձմեռ ժամանակ (աւելի) որսորդութեամբ, և բաժանում են իրանց հին սովորութեանց համաձայն որսերը դրացեաց վերայ, այս սովորութիւնն էլ կայ որ երբ երեսայն 10 կամ 12 տարեկան է դառնում, սկսում է պարապիլ որսորդութիւնով և այդ պատճառով նրանք աւելի աներկիւղ և քաջասիրտ են, և այդ մասին Սիւնիք գովավարանում են Ռուսահայոց մէջ. որովհետեւ հայկական անվահեր ոգին կենդանի ունին պահած իւրեանց սրտերում, իսկ մեր Շիրակ վանցւոց մեծ մասը, չն սրխալվիլ կամ մեղանչել, եթէ ասեմ բոլորը հրացանի բերանը ու պոչը չեն ձանաչում, անհոգութեամբ իրանց յանձնելով պահապանոց խնամոցը, և այդ պատճառաւ է, որ միշտ գողութիւնները և մարդասպանութիւնները անպակաս են, բոլորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ, իրանց ագիտութեան հետեանքը։

Հերկում են գետինը գութանով և չութով, և ցանում են ցորեան (որի մեծ մասը աշունքն են ցանում, որոնք ասվում են

(1) 2որեք անկիւնի մի սեղան դրասեղանի նման, վրէն ձգելով մի քանի հաստ շորեղեններ տակը որ տեղ պարունակվում է թոնիրը մեկնում են օաքերը։

աշունքացան) գարի, հալածուկ, ոսպ, հա-
ճար և բակլայ, քաղումեն արտերը ման-
գաղով և չնով (1) շինումեն խուրձեր,
որովհետև տեղերը լաւ տափարակ չ'ընե-
լով՝ սայլ չի գործածվում, այլ կրումեն
ձիւրով, ջորիններով և աւանակներով :
Նրանց կերակուրները պարզ են և առող-
ջարար 1 — խորոված, եահնի (բողպաշ)
փլաւ, թանապուր (սպաս) և բազկա-
թան (2), հացերը լաւաշէ, որ եփումեն եր-
կու կամ երեք օրը միանգամ թոնիրով և
այդ պարտաւորութիւնը տանտիկնոջն է
ինչպէս վերեւում ասացինք, չունին ամեն-
ւին սովորութիւն աշղի շինծու հեքեաթ-
ներ լսելու, նրանց ծերերը աւանդումեն
երիտասարդներին անցեալ եղածները՝
Հայերու քաջագործութիւնքը և Սիւ-
նեաց իշխանների պատմութիւնքը, և նը-
րանք ականջ են դնում քաղցրութեամբ,
երեսուն կամ քառասուն տարեկան մար-
դը իր երէց (աւագ) որդին պսակելուց յե-
տոյ՝ սկսում մօրուք թողնել, և համար-
վումէ ծերակուտի անդամ, որին անուա-
նումեն աղսախալի. և իրաւունք է ունե-
նում գիւղի գործերին խառնվելու. երի-
տասարդները ամենայն սիրով լսումեն ծե-
րերու խօսքը, և պատուումեն նրանց, մը-
տաբերելով՝ որ ասումէ, «Պատուեցէ՛ք

զձերս, զի և դուք ծերանջիր» Սովորու-
թիւն ունին ամէն մի տօն օրում պատա-
րագ մատուցանել տալու ննջեցելոց համար,
և յայտնի է թէ՛ որ օրը որինն է, մեծ հաց-
կերութիւն և աղքատաց ողորմութիւն են
բաշխում իրանց ջերմեռանդութիւնից ըս-
տիպուած, շատ և շատ սիրումեն ճշմար-
տախօս օտար և բանիմաց մարդկանցը Տա-
թեւացւոց սովորութիւններին վարքերին,
թէ իրանց և թէ կանանց հազուադէպ-
ներին, գեղեցկութիւններին, ճշմարտասի-
րութիւններին, քաջութիւններին և հայ-
րենասիրութիւններին կարելի է հաւատա-
րին մեր Փամբակաձորոյ (Բաղկաձորոյ)
բնակիչները, դրանց մէջ մասնաւոր տար-
բերութիւն կայ. կանայքը ևս յետ չեն մը-
նում բարեպաշտութեամբ և քաջու-
թեամբ իրանց մարդիկներին, նրանց հա-
զուստը պարզ է և պարկեշտ, հազնումեն
երկար կարմիր կտաւէ շապիկներ, որ մինչև
ոտքերի երեսը ծածկումէ. իսկ տօն օրե-
րը զանաւուղ կամ դարայի (մետաքսից
գործուած կտորներ են). նորա վերայից կամ
գիւղի կարմիր չիւղի և կամ նոյնպէս դա-
նաւուղից արխալուղ, իսկ հարուսաները
քաթիպայ կարմիր կամ կապուտ մախմու-
րից սամուրի մօրթով՝ ոսկեայ կամ արծա-
թեայ կոճակներով, գլխներուն ձգւումեն շա-
լեր և կապումեն քթկալ, հարուսաները
ճակատներին դնումեն ոսկի (1), իսկ հասա-
րակները հին արծաթեայ փողեր, և ամէնն
սու հասարակ հազնումեն կանանց բաշխաղ

(1) Մանգաղը գերանդիի նման մի ծուռ փոքր
երկաթ է բաւականին լայն, չինը նոյնպէս, բայց
չինը ունի իւր բերանում իրանից շինած ատամ-
ների, դրա գործածելը աւելի զժուար է քան թէ
մանգաղը.

(2) Բազկաթանը շինումեն թանից մէջը լցնե-
լով բազուկներ որը գործ են ածում ձմեռ ժամա-
նակ, տաքացնելով և վերէն իւղ լցնելով, որը շատ
ախորժելի և մարսական կերակուր է դառնում.

(1) Ես այնպէս եմ կարծում, որ այդ սովո-
րութիւնը հիթանոսական դարուց հետէ է մնա-
ցել, և գլուխներին ոսկի դնելը շատ օգուտ է գր-
խացաւի, որովհետև մահնիսութիւն ունի նրա հետ

(կօշիկ), որ անուանուածն սաղորի բաշմաղ գեղեցկութեամբ ևս յետ չեն մնում իրանց մարդերից, մարդկանց հետ ամենեւին արտ գնալու սովորութիւն չունին Շ իրակվանայ բնակչուհոց պէս, նրանք միայն աշխատու- մեն անային գործերը, և երբեմն կալի մաս- նաւոր գործերը կարգադրելու, կանայքը ամենեւին սովորութիւն չունին արաղ կամ գինի գործածելը: Չմուսն պաշարները դը- րանք քաղուածն անտառից խնձոր, տանձ, շեր և ին, խնձորը, տանձը չորացնելով շի- նուածն խնձորաչիր և տանձաչիր, իսկ շը- րորը քամուածն և չորացնում կերակուր- ները թթվացնելու համար, որը ըստ բը- ժշկականութեան շատ օգտակար է. իսկ ջուր բերելը աղբիւրից աղջիկների կամ նորահարսների պաշտօնն է, որ բերումեն հողէ կամ պղնձէ կժերով ուսերի վերայ դրած, ամէն մինը իրանց պարտքը ճանա- չում և սրբութեամբ կատարումեն: Վիւ- ղի մէջ շատ արհեստաւորներ չկան, ըստ որում, համարեայ թէ՛ ամէն մէկը իր պի- տաբաները շինումեն, բացի մէկ դարբնից և խառատից (հիւսնից), շատ և շատ ջեր- մեռանդ են դէպ ի եկեղեցին, և նորա ըս- պասաւորները զարդարած և մաքուր են պահում եկեղեցին, ինչպէս որ վայելումէ Աստուծոյ տանը, աւելի սովորութիւն չու- նին վանք գնալու, և վանականներու հետ ամենեւին յարաբերութիւն չունին. 1)

Մէկ լաւ սովորութիւն ևս ունին, որ ինչ պաշտօն մէկին յանձնելու լինին, մինչև նորա հաւատարմութիւնը և արժանաւո- թիւնը չգիտենան, չեն յանձնել, մէկ քէ- հէն (տանուտէրը) մինչև 8, 9 և 10 տարի քէհութիւն է անում, իսկ մեր Շ իրակ- վանցիք քանդված են և քանդվումեն քէ- հայ փոխելու երեսից, մեր Շ իրակվանցուց կռիւների և գլուխ ճեղքելու ասպարէզը լայնացաւ, որովհետեւ ընտրելի անձերը շա- տացան 1 - Վլաւին, Սուդիայ, քէհայ և ին: Հովուական պաշտօնը կատարումեն իրանց միջի ուժեղ և քաջ երիտասարդ- ները, ամենեւին սովորութիւն չունին ու- ըիշ ազգից հովիւ վարձելու, եթէ այդ մա- սին հարցանես, նրանք արիութեամբ պա- տասխանումեն, թէ՛ վարձկանը ինձ նման չէ կարող պահել, և ինձ պէս սրտացաւ չի լինիլ իմ ապրանաց վերայ, մեր Շ իրակ- վանցիք եթէ տունը տասն մարդ լինին և բոլորը պարսպ նստած, դարձեալ մի քուրդ (մար) հովիւ են բռնում, որը օգուտ չը- տալուց զատ իրանց ինչքը գողանումէ, և պատիւները արատաւորում. ինչպէս միշտ տեսնվումէ, բայց՝ ամենեւին չեն խրատվում: Պահումեն մեղուններ գիւղի ներքեւի ձորա- կում, որին անուանումեն ընկզատ, ընկու- ղի անտէր շատ ծառեր լինելու աղագաւ, և ով կամենումէ, կարող է քաղել, բացի

(1) Այստեղ իրար հակառակ բան է տեսնվում Վաղարշապատեցւոց և սոցա մէջ, որովհետեւ վա- զարշապատեցիւ մինչև երեկոյ Եջմիածնայ միջու- մըն են, և նորա հացովն են կառավարվում բաց ի մի քանիսներից, իսկ սրանք փախչումեն . . . բաց ի դրանից՝ ևս իմ աչքովս Եջմիածնայ քանի

տներում սրանից հինգ կամ վեց տարի առաջ տեսած եմ Եջմիածնայ ամանների, ափսիսն յիշա- տակը գրուած. ո՞վ գիտէ ինչ ճանապարհով ձեռք բերած ի հարկէ դա առաջացած է թուլութիւնից, յուսով ենք որ Վեհափառ Հայրա- պետը իր անքուն հսկողութեամբ տեղիք չէ տալու պատահեաւ այգապիսի անհետութեաների:

վանքի մի քանի ծառներից, որք գտանվում են իր սեզերի (չմանների) մէջ, բաւականին մեղը են ունենում, որից իրանց հարկաւորելն բառնալուց զկնի, մնացածը տանում են Շուշի քաղաքը կամ Նախիջևան ծախելու, բերելով այնտեղից իրանց տներին հարկաւորած իրեղէնները, որոց մեծ մասը լինում է այնպիսի բաներ, որք իրանք չեն կարողանում շինել: Տղէքը նըշանում են և պսակում 17 և 18 տարեկան հասակում, բայց տղէքը ամենևին իրաւունք չունին ընտրութիւն անելու ամուսնոյ համար, որովհետեւ կախուած է ծնողների կամքից. հարսանիքները գլխաւորապէս անում են ձմեռ ժամանակ, որովհետեւ այդ ժամանակ բոլորովին աշխատանքից պրծած են լինում, ամէն պատրաստութիւնը տեսնելուց յետոյ սկսում են հարսանիքը ուրբաթ օրը երեկոյին, և այն օրը սովորական պարերը խաղալուց և ուրախանալուց յետոյ արձակվում են գոհ լինելով երկու տեսակ պահոց կերակուրներով և մի քանի քաշի (չափ) գինիով, հարսանիքը տեւում է ուրբաթ օրից մինչև երկուշաբթի օրը, գիւղի մեծ մասը անպատճառ հարսանիքաւոր են լինում թէ հացկերութեան, և թէ միւս ուրախութեանց ժամանակը զուարճանում են զուռնայով և փողով. ամենևին մի անկարգութիւն չէ լինում այդ հանդիսում, հարսանիքի վերջի օրը զուռնաձին նստում է տան մէջ տեղը, և յիշում է հրապարակաւ հարսանիքաւորների ընծաները, որոց մեծ մասը լինում է փող, կամ մի չաթախի, (վրաց փողէ 40 կոպէկ) կամ մի սահապղոան, (պարսից փողէ 30 կոպէկ) օտար մարդկանց իրրեւ աւելի մէկ պատիւ նստացնում

մին քահանայի մօտ աւելի մեծարանք և պատիւ են ցոյց տալի, ստիպուած իրանց հիւրասիրութիւնից, պսակը կատարում են ցերեկով մեծ հանդիսով հրացաններ պարպելով և երգեր երգելով (երգերի մեծ մասը Փարսէրէն կամ Թուրքերէն է) նորապսակաւորը փողոցից անցած ժամանակը բարեկամները նրա հանդէպ հանում են սեղան քաղցրեղէններով և մրգեղէններով լցուած, խաչեղջայրը (քաւորը) պարտաւոր է իր ձեռքով այն սեղանից մի պատառ զնել փեսայի բերանը, եթէ այդ փեսայն չը կատարէ, ուրեմն և չէ յարգում սեղանը. զանազան տեսակ պարեր են խաղում, որոնց մինը եայլի են անուանում, մի կին առաջ և անցած միւսները կարգով ընկած յետեւ, ինչպէս և ինչ տեսակ խաղայ առաջի կինը, միւսները պէտքէ հետեւին նըլան, եթէ ոչ նա ձեռին բռնած ճիպոտովը հասցնում է, կենդապար, լակզիպար, միրզէի և ըն: Արկուշարաթի երեկոյեան անում են որս, որին մեր Շ իրականցիք անուանում են հաթուկ, զուռնաձին կտուրը կանգնած իր զուռնէն ածում է, ժողովում են գիւղի բոլոր ազապ (ամուրի) տղէքը խաչեղջայրը, փեսայն և ազապաչին 1) (ազապների գլուխը), մերկացրած Թուրը խաչեղջայրը և ազապաչին կրտուրի վրայ բռնում են և փեսայն հաւը մի քանի անգամ տանելից և բերելից

(1) Ազապաչիութիւնը մի իրաւունք ունեցող պաշտօն է, որ մի «պահպանիչ» ու ստանում է ծխատէր քահանայից, (ի հարկէ ոչ առանց դրամի) և պարտաւոր է զանազան հրգերով և գովեստներով հացնել փեսայի շորերը: Այդ սովորութիւնը Աղէքսանդրապօլում ևս կայ:

յետոյ զարնումէ թրի բերանին, վիզը կտրելու պէս ձգումէ կտուրից ներս, և այդպէս վերջանումէ հարսանեաց հանդէսը: Իսկ հաւը միւս օրը եփումեն, փեսայն ազապների հետ ուտում և ուրախանումեն, հարսները ամենևին իրաւունք չունին կէսրարի և կեսերոջ հետ խօսելու մինչև որ երեք տղայի մայր չլինին: Վարելի է ասել, որ այդ մասին պարսկական բռնութիւնը դէպի կնանիքը բաւականին ներգործած է, դրանց բնաւորութեան մէջ, որ շատ խիստ են վարվում իրանց կանանց հետ, ճանաչելով նրանց իբրև ստրուկ, և ոչ իրանց հաւասար և կենակից, ի հարկէ դա էլ քիչ քիչ վերջանալու է:

Գիւղի մէջ ուսումնարան չունին: Արեւիայքը կարդումեն կամ Տաթևու վանքում, որ տեղ կայ մասնաւոր դպրոց, և կամ իրանց քահանաների մօտ:

Ազրափակելով խօսքիս ընթացքը՝ յիշումեմ նոցա ևս որ, երանի թէ՛ բարեհաճէին, ուշք դարձնելու Տաթևացիք այդ ամենադիւաւոր և ամենահարկաւոր աւարկայի (դպրոցի) վերայ, հիմնելով իրանց գիւղում մի ծխական դպրոց, որով կատարելու էին դէպ ի իրանց որդիքը ունեցած հայրական պարտքը, և Ալեհափառ հօր սուրբ կամքը, որը իր Աթուղիկոսական Գահը բազմած օրից սկսել է աշխատել ամեն մի քաղաքում և գիւղում բանալ տալու դպրոցներ, լաւ հասկացած լինելով Հայոց ազգի այդ մասին ունեցած կարեւորութիւնը և դրանից քաղելու օգուտները: Ալեհափառ Հայրը լաւ է ճանաչում իր պարտաւորութիւնքը և զիտէ տալ «որում զհարկն հարկ, և որում ըզպատիւ պատիւ», Հայոց ազգի համար մեծ

բաղդաւորութիւն է, որ ունի այսպէս ազգասէր և ուսումնասէր Հովիւ, որը իր անձը ևս չէ խնայում իր հօտի մտաւոր կրթութեան համար, ուրեմն հարկ է աշխատել Ալեհափառ Հօր սուրբ կամքը կատարելու, որը հայումէ դէպ ի հայկական օգուտը. ի դերեւ չհանելով նորա յոյսը և աշխատութիւնը, և Ալեհափառ Հայրն էլ տեսնելով իր պարտէզի (Հայաստանի) պտուղները, կրկնելու է այս խօսքը, թէ «այս ուրախութիւն որ իմն է լցեալ է», որովհետեւ այդ է նորա սուրբ կամքը, և միակ բաղձանքը: Ուրեմն տայ Աստուած երկար կեանք իր ամէն մի բարի և ազգաշահ դիտաւորութիւնքը կատարելու աղագու:—

Ապրապէս Մարտինոս

Աղետանդաւորացի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԳԵՏՆԱՇԱՐԺԻ

(ՇԵՐՆՆԻՆԻՆ Ե ՎԵՐՔ)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ԳԵՐՆԱՇԱՐԺԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՅԱՏՐՈՒՆԻՆ

Գեանաշարժի նորագոյն բացադրութեան գաղտնիքը կարելի է հասկանալ զիտնալով որ նորա Բոն պարհաւոր (այսինքն գեանաշարժի) հոլագիտի խորհրդից ի՞նչ այլ արտաքին մի ո՞ր և ի՞նչ ոյժի ազդեցութիւնից է այն է՝ արեգակի և լուսնի յգոլակոն ոյժից: Նոր բացադրութիւնը ապացուցանում է՝ որ գեանաշարժը մի ևնոյն պատ-